



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

30 մայիսի 2012 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7/4

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ԴԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 41 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևանի քաղաքապետի խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, քաղաքապետի մամլո քարտուղար Շ.Մարդարյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ՁԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Ս.Մարգարյանը շնորհավորեց Աջափնյակ, Դավթաշեն և Նոր Նորք վարչական շրջանների նորանշանակ ղեկավարներ Արտավազդ Սարգսյանին, Ռուսլան Բաղդասարյանին և Արմեն Ուլիխանյանին:

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը հրապարակեց Երևանի ավագանու «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» դաշինքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամներ Հրանտ Բագրատյանի, Լյուդմիլա Սարգսյանի, Խաչատուր Քոքոբեյանի, Ստեփան Դեմիրճյանի, Լևոն Զուրաբյանի, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ Արտավազդ Սարգսյանի և Ռուսլան Բաղդասարյանի դիմումները՝ Երևանի ավագանու անդամի իրենց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ: Քաղաքապետ Ս. Մարգարյանը տեղեկացրեց, որ հրաժարականների վերաբերյալ արձանագրությունները և դիմումները կներկայացվի ՀՀ ԿԸՀ:

Երևանի քաղաքապետ Ս.Մարգարյանն առաջարկեց, լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտությունից ելնելով, Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի չորրորդ նիստի

օրակարգի նախագծից հանել «Երևան համայնքի սեփականություն համարվող, Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող էլեկտրաէներգետիկայանը և կաթսայատունը ու դրա զբաղեցրած հողամասն անհատույց օտարելու մասին» Երևանի ավագանու իրավական ակտի նախագիծը:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2011 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N359-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
4. Գույք ընդունելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
6. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
7. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
8. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
9. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
10. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N345-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
11. Երևանի համայնքային ենթակայության մի շարք ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխության և դրանց կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին:
12. Երևանի Նուբարաշենի թաղային համայնքի «Մարգարաշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:
13. Գրիգոր Հարությունյանի անվամբ փողոց վերանվանելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Օրակարգի հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ– Հաստատել Երևանի ավագանու յոթերորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՍԵՑԻՆ -Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2011 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Արևշատյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2011 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումներն Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 1-ը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N359-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

Երևանի ավագանու իրավական ակտի նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին լիազորություններ վերապահելու մասին» N 359-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) որոշման 1-ին կետում «լիազորությունները» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն որոշման 2-րդ կետում նշված դեպքի,» բառերով,

2) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ կետով.

«2. Թույլատրել Երևանի քաղաքապետին իրականացնել պիլոտային (փորձնական) ծրագիր՝ աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, ինչպես նաև այդ վճարը համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ գանձելու (մուտքագրելու) լիազորությունները մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ վերապահել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտրված կազմակերպությանը»:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

4. ԼՍԵՑԻՆ - Գույք ընդունելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Որպես նվիրատվություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող գույքը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին» N161-Ա որոշման 1-ին կետով հաստատված

1) N6 հավելվածում «Անահիտ Սիմոնյան» բառերը փոխարինել «Դավիթ Սարգսյան» բառերով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

6. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի 112 շենքի հ.56՝ 47.3քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.11.2011թ հ.2708327 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (սվիթչել) Կորյուն Դուկասյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

7. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ –1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի 112 շենքի հ.55՝ 78.5քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.11.2011թ հ.2708326 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (սվիթչել) Ավետիք Հայրապետյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

8. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել Երևանի քաղաքապետին Շինարարների փողոցի հ.35 շենքի հ.41 բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 31.10.2006թ

h.2188784 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Անահիտ Հովակիմյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

9. ԼՄԵՑԻՆ - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Պողոս Փլավյանը:

Իրավական ակտի նախագծի վերաբերյալ պարզաբանումներ տվեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն՝ Հովհաննես Էլբակյանի և Անի Հակոբյանի սեփականությունը հանդիսացող Երևանի Արաբկիր 27-րդ փողոցի հ.6/2 հասցեում գտնվող 104.8քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.03.2007թ. հ.2240247 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Սարալանջի փողոցին հարակից տարածքում գտնվող 104.8քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

10. ԼՄԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N345-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

Իրավական ակտի նախագծի վերաբերյալ պարզաբանումներ տվեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ>> N345-Ն որոշման հավելվածի VI-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 32413-43632-րդ կետերով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

11. ԼՍԵՑԻՆ - Երևանի համայնքային ենթակայության մի շարք ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխության և դրանց կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Գ. Սողոմոնյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Անվանափոխել Երևանի համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունները՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Երևանի համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները՝ նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 2- 156 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

12. ԼՍԵՑԻՆ - Երևանի Նուբարաշենի թաղային համայնքի «Մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Յու. Մամիկոնյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Անվանափոխել Երևանի Նուբարաշենի թաղային համայնքի «Մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը՝ «Երևանի Նուբարաշեն մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Երևանի Նուբարաշեն մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան իրականացնել նշված կազմակերպության ֆիրմային անվանման պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառնություններ և ձևակերպումներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

13. ԼՍԵՑԻՆ - Գրիգոր Հարությունյանի անվամբ փողոց վերանվանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Դ.Դեմիրճյան փողոցի փակուղին վերանվանել որպես Գրիգոր Հարությունյան:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ԸՆԴՄԻՋՈՒՄ

Նիստը վերսկսվեց ժամը 12.10-ին:

Երևանի ավագանու անդամների կողմից հարցեր և առաջարկներ չներկայացվեցին:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի առաջարկությամբ որոշվեց յոթերորդ նստաշրջանի 5-րդ նիստը գումարել 2012 թվականի հունիսի 26-ին, ժամը 11.00-ին:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արձանագրեց՝
Ն. Ղուկասյանը